ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

28.12.2023

No 01101-1599

«Նոլինա» ՍՊԸ
(ՀՎՀՀ 01304055
ք. Երևան,Դավթաշեն 10/7,
հեռ. 095-333-757,
էլ հասցե eloyanvaruzhan2020@gmail.com)

Ծանուցում
(Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին)

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Գնորդ) և «Նոլինա» ՍՊ ընկերության (այսուհետև՝ նաև Վաճառող) միջև 20.11.2023թ. կնքված թիվ ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-23/ՄՀՀ-2 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն Վաճառողը պարտավոր է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներով և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավոր է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Համաձայն պայմանագրի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 (քսանհինգ) օրացուցային օրվա ընթացքում, սակայն ընկերության կողմից չի պահպանվել պայմանագրայի պարտավորությունները և ապրանքի մատակարարում չի իրականացվել:

Համաձայն Պայմանագրի 2-րդ մասի 2.1.7 կետի Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն պայմանագրի 2-րդ մասի 2.1.7.1 կետ բ) ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավել: Հիմք ընդունելով վերոգրյալը «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է պայմանագիրը ամբողջությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պարտավոր է **Պայմանագրի 6.3 կետի համաձայն** վճարել տուգանք պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ **3250** (երեք հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018001876 հաշվեհամարին:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված **պայմանագրի ապահովումը (665000** վեց հարյուր վաթսունհինգ հազար ՀՀ դրամ) և **որակավորման ապահովումը** (**997500** ինը հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ) սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը

մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տաս օրացուցային օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ռեկտոր՝ **Դ. Գալոյան**

Կատարող Գոհար Թադևոսյան
գնումների բաժնի գլխավոր մասնագետ
հեռ. 593-483